

**“ԱՄԵՐԻԱ ՄԵԹԱ ԹՐԵՅԴԵՐ” ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 9), այսուհետ՝ «Բրոքեր», ի դեմս տնօրինության նախագահ գլխավոր տնօրեն Ա. Հանեսյանի, որը գործում է բանկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս _____ մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՎՅԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.1 Սույն համաձայնագրի իմաստով՝
 - 1.1.1. Տարբերությունից շահույթ ստանալու պայմանագիր (CFD) (այսուհետ՝ ՏՇՊ, պայմանագիր, որի առարկան կողմերից մեկի վճարային այնպիսի պարտավորությունն է, երբ այդպիսի պարտավորության առաջացումը կողմերից որևէ մեկի մոտ մյուս կողմի նկատմամբ, այդպիսի պարտավորության առկայությունը և դրա չափը յուրաքանչյուր պահի դրությամբ կախված է այդ պահի դրությամբ որևէ գույքի արժեքի կամ որևէ ցուցանի մեծության (Ածանցողներ) և ՏՇՊ կնքելու պահին միևնույն գույքի արժեքի կամ ցուցանիշի մեծության տարբերությունից և ցանկացած պահի դրությամբ այդ պարտավորությունների չափը ուղիղ համեմատական է այդպիսի դրական կամ բացասական տարբերությանը: ՏՇՊ պայմանագրով կատարումը տեղի է ունենում Հակադարձ գործարքի կնքման հիմքով կամ Ածանցողի դադարմամբ՝ եթե Ածանցողը ունի մարման որոշակի ժամկետ:
 - 1.1.2. Համակարգի պայմաններ՝ Համակարգի միջոցով Գործարքների կնքման պայմանները, Մարժայի ապահովումը, դրա համալրման պահանջը և ժամկետները, Դիքեքի փակման կամ փակման բացակայության դեպքերն ու պայմանները, Վերջնահաշվարկի կատարման պայմանները:
 - 1.1.3. Համակարգի օպերատորներ՝ ՏՇՊ առաջարկողները, Բրոքերը և Գործակալները, որոնք Համակարգի շահագործման լիցենզիաների և գործակալան պայմանագրերի հիման վրա իրավասու են սահմանելու Համակարգի պայմանները:
 - 1.1.4. ՏՇՊ առաջարկող՝ ֆինանսական կազմակերպություն, որը ՏՇՊ կնքելու Հաճախորդի առաջարկի դեպքում պատրաստակամ է Հաճախորդի հետ կնքել ՏՇՊ՝ համապատասխան ՏՇՊ պայմաններով և այդպիսի պատրաստակամության մասին տեղեկատվությունը հասանելի է Հաճախորդին համակարգի միջոցով՝ առանց ՏՇՊ առաջարկողի մասին տեղեկությունը հասանելի դարձնելու:
 - 1.1.5. Արժույթ՝ համակարգում արժույթային գործարքների կնքման համար հասանելի արտարժույթներ:
 - 1.1.6. Արժույթային գործարքներ՝ ՏՇՊ որի Ածանցողը որևէ Արժույթի փոխարժեքն է մեկ այլ Արժույթի նկատմամբ:
 - 1.1.7. Գործարք՝ Համակարգի միջոցով ՏՇՊ կնքումը Հաճախորդի և ՏՇՊ առաջարկողի միջև, ներառյալ Արժույթային գործարքները:
 - 1.1.8. Դիրք՝ Հաճախորդի համար ուժը պահպանող Գործարքի առկայությունը:
 - 1.1.9. Դիրքի փակում՝ Գործարքի մարման և լուծման նպատակով կնքվող գործարք՝ Գործարքի կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Համակարգի գործողության ուժով իրականացվող ավտոմատացված գործողություն, որի իրավական հետևանքը համապատասխան Գործարքի լուծումն ու այդ Գործարքով Վերջնահաշվարկի իրականացումը:
 - 1.1.10. Օածկույթ՝ Համակարգի միջոցով Հաճախորդի կողմից կնքվող Գործարքների կնքման համար անհրաժեշտ գումարի այն մասը, որը ապահովում է Համակարգը՝ հնարավոր դարձնելով Գործարքի կնքումը Հաճախորդի կողմից միայն Մարժայի փոխանցման պայմանով:
 - 1.1.11. Մարժա կամ Մարժայի մեծություն՝ Հաճախորդի հաշվում ապահովման ենթակա նվազագույն գումար, առանց որի համապատասխան ծավալով և արժեքով Գործարքի կնքումը կամ Գործարքով Դիրքի պահպանումը Համակարգում անհնար է և որը ապահովում է Հաճախորդի՝ Գործարքներով հակառակ կողմի նկատմամբ պարտավորությունների կատարումը:
 - 1.1.12. Նախնական Մարժա՝ Համակարգի միջոցով Հաճախորդի կողմից կնքվող Գործարքների կնքման համար անհրաժեշտ գումարի այն նվազագույն մասը, որը Հաճախորդը պարտավոր է հասանելի

- դարձնել Վարջնահաշվարկի համար՝ ապահովելով դրա առկայությունը իր հաշվին: Հաճախորդի հաշվում Նախնական մարժայի համար անհրաժեշտ գումարները սառեցվում են:
- 1.1.13. Պահպանող Մարժա՝ Դիրքի պահպանման համար անհրաժեշտ այն գումարը, որը Հաճախորդը պարտավոր է հասանելի դարձնել Վարջնահաշվարկի համար՝ ապահովելով դրա առկայությունը իր հաշվին՝ թույլ չտալու համար Դիրքի ավտոմատացված փակումը Համակարգի կողմից: Հաճախորդի հաշվում Պահպանող մարժայի համար անհրաժեշտ գումարները սառեցվում են:
- 1.1.14. Մարժայի համարման պահանջ՝ Պահպանող մարժան ապահովելու համար անհրաժեշտ գումարը Հաճախորդի կողմից իր հաշվում ապահովելու պահանջ, ընդ որում այդպիսի ապահովման դեպքում համապատասխան գումարները սառեցվում են Հաճախորդի հաշվում:
- 1.1.15. Գործարքի պայմաններ՝ Գործարքի կքնման արդյունքում կողմերի իրավունքներն ու պարտավորությունները, Գործարքի առարկա Աժանցողը և դրա ծավալը, կոնկրետ Գործարքների համար դրանց կնքման կամ Դիրքի կնքման պահին Համակարգում կամ Բրոքերի կայքում հասանելի պայմանները, այդ թվում՝ Մարժայի մեծությունները, Գործարքով Վերջնահաշվարկի արդյունքում տվյալ պահի դրությամբ կողմերի ստանալիք կամ վճարման ենթակա գումարները:
- 1.1.16. Ծածկույթի տրամադրում՝ Համակարգի կողմից Գործարքի կնքման հնարավորության ընձեռումը՝ միայն Նախնական մարժան ապահովելու պայմանով:
- 1.1.17. Աժանցող՝ համապատասխան ՏՇՊ-ի հիմքում ընկած գույքը կամ ցուցանիշը, որոնց արժեքի (փոխարժեքի) կամ մեծության տատանումից կախված են Գործարքի կողմերի պարտավորությունների առկայությունը և չափը յուրաքանչյուր պահի դրությամբ՝ ՏՇՊ համաձայն:
- 1.1.18. Հաճախորդի պարտավորությունը՝ Համակարգի միջոցով Ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած՝ Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունը, այդ թվում՝ Բրոքերի վճարման ենթակա Միջնորդավճարները, Ծածկույթի տրամամադրման վճարները, Հաճախորդի կնքած Գործարքներից ծագող պարտավորություններով այդպիսի Գործարքների կողմերի առնչությամբ Վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ գումարները և այլն:
- 1.1.19. Կայք՝ www.ameriabank.am դոմենի միջոցով հասանելի Բրոքերի ինտերնետային գլխավոր էջը (home page):
- 1.1.20. Համակարգ՝ տարբեր ՏՇՊ առաջարկողների հետ ՏՇՊ գործարքի կնքման հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող, «Ամերիա Մեթաթրեյդեր» պայմանական անվանում կրող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որին հասանելիության ապահովումը սույն համաձայնագրով ծառայությունների մատուցման միջոցն է և որի միջոցով Հաճախորդների հնարավորություն է ընձեռվում կատարման փոխանցել գործարքների կնքման իրենց պատվերները ի կատարում՝ Համակարգի օպերատորների կողմից սահմանված Համակարգի պայմաններով:
- 1.1.21. Պայմանագիր՝ Բրոքերի և Հաճախորդի միջև _____-ին կնքված՝ Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման (կոմիսիայի), բրոքերային հաշիվների սպասարկման N ____ պայմանագիրը, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ Բրոքերային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները:
- 1.1.22. Պահառության պայմանագիր՝ _____-ին Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված՝ Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր:
- 1.1.23. Սույն համաձայնագրում մեծատառով օգտագործվող, սակայն սույն համաձայնագրի 1.1. կետում չսահմանված տերմինները/հասկացությունները կիրառվում են Պայմանագրում սահմանված իմաստով:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆԱՐԿԱՆ

- 2.1 Համակարգի միջոցով, մասնավորապես՝ Հաճախորդին տրամադրելով հասանելիություն Համակարգին՝ ՏՇՊ-ներ կնքել ՏՇՊ առաջարկողների հետ՝ Համակարգի պայմաններով՝ սույն համաձայնագրին, Պայմանագրին և Պահառության պայմանագրին համաձայն:
- 2.2 Հաճախորդը սույն համաձայնագրով և Պայմանագրով սահմանված կարգով վճարում է սույն համաձայնագրի 2.1 կետում նշված ծառայությունների համար:
- 2.3 Բրոքերը իր անունից և իր սեփական հաշվին Հաճախորդի հետ գործարքներ չի կնքում, ՏՇՊ ներ չի առաջարկում, գնման կամ վաճառքի առաջարկ չի իրականացնում, ինչպես նաև իր անունից կամ այլ անձի անունից և կամ հաշվին չի վաճառում կամ գնորդից չի գնում որևէ Արժույթ, այլ իրականացնում է

բացառապես բրոքերային միջնորդության բնույթ կրող ներդրումային ծառայությունների մատուցմանը ուղղված գործառնություններ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

- 3.1 Պայմանագրի 2.1 կետում նշված ծառայությունները Բրոքերը Հաճախորդին մատուցում է Համակարգին Հաճախորդի հասանելիությունը ապահովելու միջոցով: Համակարգը Հաճախորդին հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար ձևակերպել և Համակարգի միջնորդությամբ համապատասխան ԱՀ-ներում և/կամ համապատասխան ՏՀՊ առաջարկողներին կամ այլ անձանց կատարման և/կամ ակցեպտավորման առաքել Գործարքների կնքման հանձնարարականներ և հայտեր, ընդ որում Բրոքերը Համակարգին Հաճախորդի հասանելիությունը ապահովելու փաստի ուժով հանդիսանում է Հաճախորդի հանձնարարականները/հայտերը ի կատարում փոխանցելու ծառայություններ մատուցող անձ (բայց ոչ այդ հանձնարարականները/հայտերը կատարելու և ակցեպտավորելու պարտավորություն ստանձնող ներդրումային ծառայություն մատուցող անձ):
- 3.2 Հաճախորդի Գործարքներով Վերջնահաշվարկը կատարում է Բրոքերը՝ Հաճախորդի միջոցների հաշվին՝ Պայմանագրին և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ Համակարգի պայմաններին և Գործարքի պայմաններին համապատասխան:
- 3.3 Հաճախորդը իրավասու է օգտագործել և օգտագործելու է Համակարգը “ինչպես որ է” սկզբունքով և չի կարող Բրոքերին պահանջ ներկայացնել կապված որևէ կարգավորվող շուկայում կամ որևէ գործարք կնքելու ընդհանուր հնարավորության բացակայության հետ:
- 3.4 Հաճախորդը կարող է ակտիվացնել և օգտագործել Համակարգը՝ բացառապես Համակարգի մուտքի օգտագործողի անուն (username) և ծածկագիրը ճիշտ մուտքագրելու պարագայում: Օգտագործողի անուն և ծածկագիրը Հաճախորդի անհատական կողմի համարի հետ հանձնվում են հաճախորդի փակ եղանակով, ինչը հավաստվում է Հաճախորդի ստորագրությամբ: Համակարգ ծանկացած մուտք Հաճախորդին փակ եղանակով տրամադրված օգտագործողի անվամբ՝ անկախ հետագայում դրան առնչվող ծածկագրի փոփոխման փաստից (ինչի հնարավորությունը Համակարգը ընձեռում է Հաճախորդին) և անկախ փաստացի մուտք գործող անձի փաստացի ինքնությունից՝ համարվելու են Հաճախորդի մուտքը համակարգ, եթե Հաճախորդը Բրոքերին հակառակ ցուցում չի տալիս չի տեղեկացրել Բրոքերին Պայմանագրում նշված կապի միջոցներով և Գործառնական օրերի ընթացքում՝ արգելափակելու բոլոր մուտքերը Համակարգ իր օգտագործողի անվանվանք՝ մինչև հակառակ գրավոր ցուցում ստանալը:
- 3.5 Սույն համաձայնագրի առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման՝ սույն համաձայնագրով չսահմանված պայմանները և չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև Հաճախորդի Միջոցների հաշվառման պայմանները սահմանվում և կարգավորվում են Պայմանագրով և Պահառության պայմանագրով:
- 3.6 Սույն համաձայնագրի հիման վրա կնքվող Գործարքներով պարտավորությունների կատարման համար նախատեսված, ինչպես նաև այդ Գործարքների արդյունքում ստացվող դրամական միջոցների հաշվառման նպատակով Հաճախորդի համար բացվում է _____ Բրոքերային հաշիվը: Հաճախորդը սույնով տալիս է Բրոքերին իր հանձնարարականը՝ սույն կետում նշված հաշիվները բացելու համար: Սույն կետում նշված Բրոքերային հաշիվների իրավական կարգավիճակը կարգավորվում է Պայմանագրով, և Պայմանագրի՝ Բրոքերային հաշիվներին վերաբերող դրույթները տարածվում են սույն կետում նշված հաշիվների վրա:

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 4.1 Համակարգը հնարավորություն է տալիս Հաճախորդին կնքել Գործարքներ՝ Համակարգի պայմանները ապահովելու և դրանց համապատասխանելու դեպքում:
- 4.2 Հաճախորդը սույնով հայտարարում է, որ լիարժեքորեն հասկանում է Համակարգի պայմանները, յուրաքանչյուր Գործարքի պայմանները, ինչպես նաև գիտակցում է համակարգի միջոցով Գործարքների կնքման առանձնահատկությունները՝ արժեթղթերի և արտարժույթային շուկայում սովորական առքովաճառքի և փոխանակման գործարքների համեմատ առավել ռիսկի առկայության հանգամանքը, մասնավորապես կորստի ռեպրում դրա մեծացումը ներդրած միջոցներ համեմատ՝ ի թիվս այլոց Ծածկույթի տրամադրման և Դիրքերի ավտոմատացված փակման անհանրինության փաստերը հաշիվ առնելով:

- 4.3 Հաճախորդը սույնով հավաստում է, որ լիովին և ամբողջությամբ հասկանում է Համակարգը, դրա շահագործման կանոնները, դրա բոլոր գործիքները, դրանով ներկայացվող տեղեկատվությունից օգտվելու և այն հիմք ընդունելով Գործարքների կնքման ռիսկը, Համակարգի միջոցով Գործարքների կնքման առանձնահատկությունները, Համակարգով Հանձնարարականների տեսակները և առանձնահատկությունները և դրանք Համակարգ մուտքագրելու տեխնիկան ձևերը, միջոցները, առանձնահատկություններն ու հետևանքները:
- 4.4 Հաճախորդը սույնով հայտարարում և հավաստիացնում է, որ ընդունում և գիտակցում է, որ Համակարգի հնարավորություններն ու գործիքները չօգտագործելու կամ սխալ օգտագործելու, ինչպես նաև Համակարգում առկա տվյալները հիմք ընդունելով ներդրումային որոշումներ կայացնելու ռիսկը կրում է միայն ինքը և որ, հետևաբար, սույն համաձայնագրի համաձայն՝ Բրոքերը Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման հետ կապված որևէ պատասխանատվություն և վնասի հատուցման որևէ պարտավորություն չի կրում՝ բացառությամբ ուղղակի դիտավորությամբ Հաճախորդին վնաս պատճառելու ապացուցված դեպքերի:
- 4.5 Բրոքերը հայտարարում է, որ, Համակարգին Հաճախորդի հասանելիությունը սույն համաձայնագրի համաձայն ապահովելով, որևէ պարտավորություն և դրանից բխող պատասխանատվություն չի ստանձնում Հաճախորդին Համակարգի շահագործման կանոնները, կարգը և առանձնահատկությունները բացատրելու համար և լիովին վստահում է սույն համաձայնագրի 4.1.-ից 4.4-րդ կետերում նշված՝ Հաճախորդի հավաստիացումներին և հայտարարություններին:

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 5.1 Համակարգը շահագործվում է Հաճախորդի բացառիկ հայեցողությամբ և պատասխանատվությամբ:
- 5.2 Սույն պայմանագրի 3.4 կետը հաշվի առնելով՝ 3.4. կետի համաձայն Հաճախորդին տրամադրված օգտագործողի անվանք մուտքի միջոցով Համակարգում ցանկացած գործողություն համարվում է Հաճախորդի գործողությունը. Համակարգով տրված ցանկացած հանձնարարական համարվում է Հաճախորդի հանձնարարականը և Համակարգի միջոցով կնքված ցանկացած Գործարքով իրավունքներ և պարտավորություններ (այդ թվում Հաճախորդի պարտավորությունները) ստանձնում է բացառապես Հաճախորդը:
- 5.3 Նոր ծածկագիր պահանջելու դեպքում Հաճախորդը և Բրոքերը հետևում են սույն համաձայնագրի 3.4. կետում նշված ընթացակարգին:
- 5.4 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը տրամադրվում է հիմնվելով սույն համաձայնագրում վերջինիս կողմից տրված հավաստիացման վրա, առ այն, որ Հաճախորդը լիարժեքորեն տիրապետում է Համակարգին, գիտակցում և հասկանում է դրանով կատարվող բոլոր գործողություններին իրավական և տնտեսական հետևանքները:
- 5.5 Հաճախորդը սույնով հավաստում է, որ հասկանում է Համակարգի բոլոր ստեղծների և ընտրանքների վրա սեղմում իրականացնելու բոլոր իրավական և ֆինանսական հետևանքները և գիտակցում դրանց նշանակությունը:
- 5.6 Հաճախորդը հավաստում է և գիտակցում է, որ համակարգչին հասանելիության և համակարգչով գործողություններ կատարելու համար նախատեսված սարքավորումների և միջոցների (ստեղնաշար, մուկ, անջատման-միացման ստեղներ և այլն) շահագործմամբ, ինչպես նաև համակարգչի և դրա պարագաների էլեկտրական սնուցման միջոցներով կամ դրանց միջամտությամբ իրականացված ցանկացած գործողություն (ստեղնաշարի, մկնիկի, համակարգչի այլ ստեղնի ցանկացած սեղմում/քիչք և այլն), անկախ այդ գործողության գիտակցված թե չգիտակցված, նախատեսված թե պատահական բնույթից, կարող է հանգեցնել Գործարքների և Հակադարձ գործարքների կնքման և կատարման, դրանց պայմանների սահմանման և/կամ փոփոխման, Ծածկույթի, շուկայական տվյալներին և տեղեկատվական ծառայություններին Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելիության ակտիվացման, ապակտիվացման, դրանց ժամանակային ռեժիմի փոփոխման և այլ իրավական փաստերի՝ դրանցից բխող ֆինանսատնտեսական հետևանքներով՝ սույն համաձայնագրի և Արժեթղթերով գործարքների պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ֆինանսական կորուստների, չնախատեսված ծախսերի, Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունների, ինչպես նաև Գործարքներով պարտավորությունների առաջացման: Սույն կետի համաձայն Համակարգով որևէ գործողություն իրականացնելու՝ սույն կետում նշված և ցանկացած այլ հետևանքների համար պատասխանատվություն է կրում բացառապես Հաճախորդը:

- 5.7 Բրոքերը իրավունք ունի ժամանակավորապես կամ անորոշ ժամկետով արգելափակել Հաճախորդի հասանելիությունը Համակարգին՝ այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետներում էլեկտրոնային նամակով ծանուցելով Հաճախորդին, եթե՝
 - 5.7.1 Հիմնավոր կասկածներ ունի, որ Համակարգը շահագործվում է այն շահագործելու իրավասություն չունեցող անձի կողմից:
 - 5.7.2 Հիմնավոր կասկածներ ունի, որ Համակարգով իրականացվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման միտված գործողություններ:
 - 5.7.3 Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Համակարգի տեխնիկական սպասարկումը՝ այն բարելավելու կամ անսարքությունները վերացնելու նպատակով:
- 5.8 **Հաճախորդը գիտակցում, ընդունում և համաձայնվում է, որ հնարավոր են Համակարգի անկանխատեսելի ընդհատումներ Բրոքերից անկախ պատճառներով, մասնավորապես՝ Համակարգի ցանցային կապը ապահովող կապուղիների, սերվերների, կապող հանգույցների անսարքությունների, ինչպես նաև Համակարգին կապը մատակարարող անձանց կողմից այդպիսի անսարքությունները վերացնելուն ուղղված միջամտություն իրականացնելու հետևանքով, և որ նման ընդհատումների համար Բրոքերը պատասխանատվություն չի կրում:**
- 5.9 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը արգելափակվում է սույն համաձայնագիրը կամ Պայմանագիրը լուծվելու դեպքում՝ լուծման օրվանից 3 օր առաջ, եթե կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվում, ինչպես նաև Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա:
- 5.10 **Բրոքերի կողմից Կայքում Համակարգի օգտագործման ձեռնարկ կամ Համակարգի շահագործման ուղեցույցներ և ուսուցողական նյութերը և/կամ Համակարգի վերաբերյալ նմանատիպ այլ նյութեր հրապարակելը որևէ առումով չի պարտավորեցնում Բրոքերին, կրում է բացառապես տեղեկատվական բնույթ և Հաճախորդը չի կարող որևէ պահանջ ներկայացնել Բրոքերին նրա կողմից տվյալ նյութերի հիման վրա գործողություններ ձեռնարկելու հետևանքների կապակցությամբ:**
- 5.11 **Հաճախորդը համաձայնվում է, որ Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելի բոլոր տեղեկությունները, շուկայական տվյալները (թե՛ իրական ժամանակում, թե՛ ուշացումով ընտրանքների դեպքում), այն է՝ գնանշումները, տնտեսական, Մարժայի մեծությունները, քաղաքական և այլ ընդհանուր բնույթ կրող և մասնավոր անձանց վերաբերող բոլոր նորությունները կրում են բացառապես տեղեկատվական բնույթ, կարող են ժամանակային և պատահական շեղումներ տալ իրական ժամանակում, ինչպես նաև որևէ այլ պահի դրությամբ իրական ժամանակում թարմացված տվյալներից և գնանշումներից, կարող են պարունակել այլ տեխնիկական և թվաբանական անճշտություններ: Հաճախորդը այդ տեղեկությունները օգտագործում է բացառապես իր ռիսկով: Բրոքերը պատասխանատվություն չի կրում դրանց հիման վրա ընդունված՝ Հաճախորդի ներդրումային որոշումների և գործողությունների բացասական հետևանքների և կորուստների համար:**

6 ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 6.1 Բրոքերը Համակարգի միջոցով ապահովում է Գործարքների կնքման հնարավորությունը Հաճախորդի համար, եթե Հաճախորդը ապահովում է Նախնական մարժայի մեծության առկայությունը Հաճախորդի հաշվում:
- 6.2 Արժույթային գործարքների դեպքում Մարժայի մեծությունը արտահայտվում է որպես Գործարքի ընդհանուր ծավալի տոկոս, որը յուրաքանչյուր Գործարքի դեպքում հաշվարկվում է տվյալ Գործարքի պայմանների հիման վրա և հասանելի և տեսանելի է Համակարգում այդ գործարքը կնքելու արդյունքում:
- 6.3 Նախնական մարժայի մեծության Հաճախորդի հաշվում բացակայությունը հանգեցնում է գործարքի կնքման անհնարինության:
- 6.4 Պահպանման մարժայի մեծությունը Հաճախորդի հաշվում չպահովելու դեպքում Համակարգի կողմից իրականացվում է Դիրքերի փակում՝ Պահպանման մարժայի մեծության և Հաճախորդի հաշվում առկա գումարի տարբերությանը համամասնորեն: Սահմանային մարժայի մեծությունը հասանելի Հաճախորդին համակարգում համապատասխան Դիրքի առկայության ողջ ընթացքում:
- 6.5 Նախնական և Պահպանման մարժայի մեծությունները կարող են փոխվել Համակարգում՝ առանց Հաճախորդին այդ մասին նախապես ծանուցելու, և Հաճախորդը սույնով հավաստում է, որ ինքը գիտակցում է դրանց՝ ժամանակի ցանկացած պահի դրությամբ իրականա ժամանակում հետևելու անհրաժեշտությունը, և որ ինքը չի կարող բողոք ներկայացնել, եթե նշված մեծությունների փոփոխման արդյունքում տեղի ունենա Դիրքերի փակում կամ մերժվի գործարքի կնքումը:

- 6.6 Բրոքերը չի ստանձնում նաև Պահպանման մարժայի մեծությունը չբավարարելու վերաբերյալ Հաճախորդին ծանուցելու պարտականություն, և Համակարգը առանց այդպիսի ծանուցման կարող է իրականացնել համապատասխան Դիրքերի փակում՝ ստացված միջոցները ուղղելով Պահպանման մարժայի մեծության բավարարմանը, ինչպես նաև պարտավորությունների մարմանը:
- 6.7 Սույնով Կողմերը պայմանավորվում են, որ Պահպանման Մարժայի մեծությունը հանդիսանում է Հաճախորդի պարտավորությունը:
- 6.8 Սույնով Կողմերը պայմանավորվում են, որ մինչև Հաճախորդի պարտավորությունների լրիվ և ամբողջական մարումը Գործարքի հետևանքով ստացված դրամական միջոցները որպես Հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց կարող են պահվել Բրոքերի կողմից (Միջոցների պահում)՝ Հաճախորդի պարտավորությունների ընդհանուր գումարի սահմաններում: Այդպիսի պահումը ենթադրում է, որ Բրոքերը իրավունք ունի ստեղծել համապատասխան գումարի միջոցներ Հաճախորդի հաշվին և չկատարել դրան փոխանցման հանձնարարականները:

7 ՏՇՊ ԲՆՈՒՑԹԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 7.1 ՏՇՊ-ի կնքմամբ Հաճախորդը Ածանցողների կամ դրանց բաղադրիչների նկատմամբ որևէ գույքային իրավունքներ չի ձեռք բերում և չի ստանում Ածանցողներից բխող որևէ պահանջի կամ այլ իրավունք:
- 7.2 Կախված Ածանցողից՝ ՏՇՊ-ն կարող է ունենալ և կարող չունենալ գործողության դադարման վերջնաժամկետ:
- 7.3 Հաճախորդը ընդունում է, որ ՏՇՊ առաջարկողների կողմից համապատասխան ՏՇՊ-ների կնքման պատրաստակամության մասին Համակարգում հասանելի ինֆորմացիան՝ Համակարգի պայմանների համաձայն չի պարտավորեցնում տվյալ ՏՇՊ առաջարկողին ակցեպտավորելու համապատասխան ՏՇՊ-ն՝ Հաճախորդի հայտի հիման վրա:
- 7.4 Հաճախորդը ընդունում է, որ ՏՇՊ-ներով հնարավոր են իրավիճակներ, երբ ՏՇՊ առաջարկողը չի ակցեպտավորում Դիրքի փակման նպատակով Հաճախորդի ներկայացրած հայտը, ինչի արդյունքում դիրքը շարունակում է բաց մնալ և գիտակցում է դրանից բխող ռիսկերը, որոնք հատկապես մեծ են կատարման վերջնաժամկետ չունեցող ՏՇՊ-ների դեպքում:
- 7.5 ՏՇՊ պայմանագրերը սեփականության իրավունքի առարկա չեն հանդիսանում և դրանց կնքմամբ Հաճախորդի մոտ սեփականության իրավունք չի առաջանում և առաջանում է բացառապես պահանջի իրավունք կամ պարտավորություն՝ ՏՇՊ առաջարկողի նկատմամբ՝ ստանալու դրական տարբերությունը ՏՇՊ երկար դիրքի դեպքում կամ բացասական տարբերությունը՝ ՏՇՊ կարճ դիրքի դեպքում, իսկ Դիրքին հակառակ շարժի դեպքում՝ վճարելու այդպիսի տարբերությունը ՏՇՊ առաջարկողին:
- 7.6 ՏՇՊ երկար դիրք է հանդիսանում այնպիսի գործող ՏՇՊ պայմանագիր, որի դեպքում Հաճախորդի նկատմամբ ՏՇՊ առաջարկողի պարտավորությունը յուրաքանչյուր պահի դրությամբ առաջանում է և առկա է բացառապես ՏՇՊ առարկա հանդիսացող գույքի արժեքի կամ ցուցանիշի մեծության և ՏՇՊ կնքելու պահի դրությամբ մինևույն գույքի արժեքի կամ ցուցանիշի մեծության դրական տարբերության դեպքում՝ այդպիսի տարբերության չափով:
- 7.7 ՏՇՊ կարճ դիրք է հանդիսանում՝ ՏՇՊ այնպիսի գործող պայմանագիր, որի դեպքում Հաճախորդի նկատմամբ ՏՇՊ առաջարկողի պարտավորությունը յուրաքանչյուր պահի դրությամբ առաջանում է և առկա է բացառապես ՏՇՊ առարկա հանդիսացող գույքի արժեքի կամ ցուցանիշի մեծության և ՏՇՊ կնքելու պահի դրությամբ մինևույն գույքի արժեքի կամ ցուցանիշի մեծության բացասական տարբերության դեպքում՝ այդպիսի տարբերության չափով:
- 7.8 Հաճախորդը գիտակցում է որ ՏՇՊ-ները արտաբորսակայական առևտրի գործիքներ լինելով պարունակում են կատարված ներդրման համեմատ մեծ կորուստներ կրելու ռիսկեր և հավաստիացնում է Բրոքերին որ լիովին ընկալում է կատարված ներդրումներից համապատասխան կորուստներ և վնասներ կրելու հնարավորությունը և Գործարքները կնքելիս միշտ գործելու է նշված ռիսկերը հաշվի առնելով:

8 ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՏՈՎՈՍԱՐԴՈՒՑՔՆԵՐ

- 8.1 Սույն համաձայնագրի համաձայն Համակարգի միջոցով ՏՇՊ գործարքներ կնքելու հանձնարարականները/հայտերը ի կատարում փոխանցելու, ինչպես նաև այդ հանձնարարականները/հայտերը ի կատարում վերափոխանցող և կատարող Գործակալներին նրանց կողմից սահմանված միջնորդավճարների փոխանցման ծառայություններ մատուցելու համար

- Հաճախորդը Բրոքերին վճարում է միջնորդավճարներ, որոնք սահմանվում են Պայմանագրի Հավելված 1-ով:
- 8.2 Սույն համաձայնագրի համաձայն Համակարգի միջոցով Արժույթային գործարքներ կնքելու հանձնարարականները ի կատարում փոխանցելու, ինչպես նաև այդ հանձնարարականները ի կատարում վերափոխանցող և կատարող Գործակալներին նրանց կողմից սահմանված միջնորդավճարների փոխանցման ծառայություններ մատուցելու համար Հաճախորդը Բրոքերին վճարում է միջնորդավճարներ՝ Համակարգում հասանելի Արժույթների առաջարկի և պահանջարկի փոխարժեքների տարբերության (spread) չափով, ընդ որում այդպիսի փոխարժեքների տարբերությունը որպես միջնորդավճար վճարումը չի կարող որևէ կերպով մեկնաբանվել որպես Արժույթային գործարքի կնքում՝ Բրոքերի և Հաճախորդների միջև:
- 8.3 Համակարգի միջոցով ցանկացած գործարքի կնքում հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվին առկա են այդպիսի գործարքի կնքման արդյունքում առաջացող և արդեն իսկ առկա՝ Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունները կատարելու համար բավարար միջոցներ:
- 8.4 Համակարգի միջոցով Արժույթային գործարք կնքելու Գործառնական օրվա ընթացքում տվյալ Արժույթային գործարքով Դիրքը չփակելու և տվյալ գործառնական օրը գերազանցող ժամանակահատվածով Դիրքը բաց թողելու համար Գործակալների և/կամ ՏՀՊ առաջարկողների կողմից սահմանված վճարները Հաճախորդի կողմից վճարվում են Բրոքերին: Նշված վճարները հաշվարկվում է օրական կտրվածքով՝ տվյալ Գործարքի կնքման օրվանից մինչև Դիրքի փակման օրը: Այդպիսի վճարումների դրույքը Բրոքերը Համակարգի փոստային ծառայության միջոցով հաղորդում է Հաճախորդին, ինչպես նաև հայտնում դրա փոփոխությունների վերաբերյալ: Փոփոխությունները կիրառելի են դառնում Հաճախորդի նկատմամբ անմիջապես Համակարգում դրանց առկայության պահից՝ անկախ նշված հաղորդագրությունները ստանալու փաստից:
- 8.5 Ծածկույթը ապահովվում է Համակարգի միջոցով չբավարարող դրամական միջոցների օգտագործման հնարավորություն տրամադրելու միջոցով, ընդ որում անկախ այն փաստից, որ Համակարգը շահագործվում է Բրոքերի կողմից՝ Բրոքերը ինքը սեփական միջոցներից Հաճախորդին փոխառություն չի տրամադրում, այլ դրա համար հասանելի է դարձնում Գործակալների/ՏՀՊ առաջարկողների միջոցները՝ Համակարգի միջոցով:
- 8.6 Սույն Համաձայնագրով Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները ծագում են Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման համապատասխան գործողություն (համապատասխան ընտրանքի սեղմում) կատարելու պահից, ընդ որում Գործարքի և Ծածկույթի տրամադրման դեպքում՝ համապատասխան Գործարքի փաստացի կնքման հետաձգող պայմանով:
- 8.7 Հաճախորդը հասկանում է, որ ամեն դեպքում Ծածկույթի տրամադրումը կարող է մերժվել առանց որևէ պատճառաբանության, և որ Ծածկույթի տրամադրումը ամեն դեպքում Բրոքերի հայեցողությունն է՝ որպես Համակարգին հասանելիություն տրամադրողի՝ հետևաբար Ծածկույթը հասանելի չլինելու դեպքում՝ Հաճախորդը պարտավոր է ապահովել Գործարքը կնքելու համար անհրաժեշտ միջոցները իր հաշվում՝ ամբողջությամբ: Այլապես Գործարքի կնքումը կարող է մերժվել:

9 ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

- 9.1 Սույն համաձայնագրի համաձայն Համակարգը տրամադրվում է Հաճախորդին՝ բացառապես ի շահ իրեն օրինական միջոցների օգտագործմամբ ՏՀՊ գործարքներով առևտուր իրականացնելու համար:
- 9.2 Համակարգի նկատմամբ Հաճախորդը սույն համաձայնագրի 8.1. կետով սահմանված իրավունքներից բացի ոչ մի իրավունք ձեռք չի բերում և պարտավորվում է հատուցել Բրոքերին Համակարգը 8.1. կետով սահմանվածից բացի այլ նպատակներով կամ միջոցներով օգտագործելու համար, այդ թվում՝ Համակարգին այլ անձանց հասանելիություն տրամադրելու, օրենքին հակասող նպատակներով կամ անօրինական ճանապարհով ստացված միջոցների օգտագործմամբ առևտուր իրականացնելու համար:
- 9.3 **Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերին պատճառված ցանկացած վնաս և կատարած ցանկացած ծախս, որը բխում է Բրոքերին ներկայացված՝ Հաճախորդի կողմից Համակարգի օգտագործման հետ կապված երրորդ անձանց պահանջներից:**

- 9.4 Կողմերի պատասխանատվության այլ հարցերը կարգավորվում են սույն համաձայնագրի այլ դրույթներով, Պայմանագրով և Պահառության պայմանագրով, իսկ դրանցով կարգավորված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:
- 9.5 Բրոքերը պատասխանատվություն չի կրում սույն համաձայնագրի համաձայն Համակարգի կողմից Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու արդյունքում Հաճախորդին հասցրած վնասի համար:
- 9.6 Եթե Համակարգը Դիրքերի ավտոմատացված փակում չի կատարում, Հաճախորդը իր ողջ գույքով պատասխանատվություն է կրում դրա արդյունքում առաջացած Հաճախորդի պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 9.7 Մույն համաձայնագրի համաձայն մատուցվող ծառայությունների որակի համար Բրոքերը երաշխիքներ չի տալիս և պարտավորություն չի ստանձնում ապահովել Համակարգի գործառնության և աշխատանքի շարունակականությունը և անընհատությունը:
- 9.8 Յուրաքանչյուր պահի դրությամբ Հաճախորդը ընդունում է Համակարգի աշխատանքը «ինչպես որ է» սկզբունքով, այն է՝ Համակարգի ցանկացած հնարավոր խափանում և/կամ դանդաղում ցանկացած պատճառով (բացառությամբ Բրոքերի՝ Հաճախորդի դեմ ուղղված դիտավորյալ գործողությունների) ցանկացած պահի դրությամբ Հաճախորդը ընդունում է որպես Համակարգին բնորոշ հատկություն: Բրոքերը պատասխանատվություն չի կրում այդպիսի խափանումների և/կամ դանդաղումների համար: Այնուհանդերձ Բրոքերը կջանա, սակայն չի պարտավորվում, աջակցել Հաճախորդին նշված խափանումները կամ դրանց հետևանքները շտկելու գործում:

10 ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 10.1 Մույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, սակայն ամեն դեպքում Հաճախորդի կողմից Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը կնքած լինելու պայմանով:
- 10.2 Եթե սույն համաձայնագիրը վաղաժամկետ չի լուծվում, ապա գործում է այնքան, որքան ուժի մեջ են մնում Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը միասին:
- 10.3 Մույն համաձայնագիրը կարող է, առանց Պայմանագրի և Պահառության պայմանագրի ուժի դադարեցման, վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ցանկացած պահի, ընդ որում Հաճախորդը պարտավոր է իր կողմից լուծման մտադրության մասին հայտնել սույն համաձայնագրի լուծման օրից 5 աշխատանքային օր առաջ: Մույն համաձայնագիրը Բրոքերի կողմից վաղաժամկետ լուծվելու դեպքում Բրոքերը իրավունք ունի իրականացնել Հաճախորդի Դիրքերի փակում: Մույն համաձայնագիրը Հաճախորդի նախաձեռնությամբ լուծվելու դեպքում Հաճախորդի Միջոցների տնօրինման հարցը լուծվում է համաձայն Պայմանագրի:
- 10.4 Մույն համաձայնագիրը կարող է միակողմանիորեն փոփոխվել բացառապես Բրոքերի կողմից՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելու կամ Կայքում համապատասխան փոփոխություն տեղադրելու միջոցով: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Հաճախորդի կողմից ծանուցումը ստանալու կամ Կայքում համապատասխան գրառումը փոփոխվելու 11-րդ օրը: Ծանուցումը պետք է պարունակի լրացման/փոփոխության տեքստը՝ ստորագրված Բրոքերի իրավասու անձի կողմից:
- 10.5 Այն աղբյուրները և փաստաթղթերը, որոնց սույն համաձայնագրում հղում է արվում՝ որպես սույն համաձայնագրով որոշվող պայման պարունակող, հանդիսանում են սույն համաձայնագրի բաղկացուցիչ մասերը պայմանով որ օբյեկտիվորեն հնարավոր է հավաստիանալ ցանկացած պահի դրությամբ դրանց բովանդակության մեջ: Մույն կետում նշված փաստաթղթերի և աղբյուրների (ներառյալ Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը) և սույն համաձայնագրի դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են սույն համաձայնագրի դրույթները:
- 10.6 Մույն համաձայնագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը, իսկ սույն համաձայնագրից բխող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Համակարգով կնքված գործարքների նկատմամբ կիրառվում է համապատասխան երկրի իրավունքը՝ ՀՀ, օտարերկրյա և միջազգային կոլիզիոն նորմերին համապատասխան:
- 10.7 Մույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր բնօրինակներից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

ԲՐՈՔԵՐ	ՀԱՃԱՒՈՐԴ
---------------	-----------------

<p>«Ամերիբանկ» ՓԲԸ ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 9 Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն</p> <p>.....Արտակ Հանեսյան Կ.Տ.</p>	
--	--